


Գ. Հ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ, Գ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հ. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ,
Պ. Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի նյութական մշակույթի արժեքները մշտապես շարունակում են մնալ ոչ միայն մասնագետների, այլև ընթերցող լայն խավերի հետաքրքրությունների կենտրոնում: Այդ հետաքրքրասիրությունը պայմանավորված է հայ ժողովրդի մշակույթի, մասնավորապես ճարտարապետության դասական ժառանգության հսկայական նշանակությամբ, որ դարերով ավանդվել, փոխանցվել է սերունդներին: Մշակութային այդ ժառանգության մեջ ստվար տեղ են զբաղեցնում անանց արժեք ունեցող պատմամարտարարական հուշարձանները, որոնցով այնքան հարուստ է Հայաստանը: Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտը, միջին դարերի հնագիտության բաժինը վերջին տասնամյակում դաշտային աշխատանքներ ծավալելով միջնադարյան հնավայրերում ուսումնասիրել է IV—VI դդ. վաղ միջնադարի ուշագրավ հնագիտական հուշարձաններ: Սույն կարճատև հաղորդման նյութն են կազմում պեղումների միջոցին հայտնի դարձած նյութական մշակույթի այն հուշարձանները, որոնք հետազոտվել, ուսումնասիրվել են Էջմիածին քաղաքում, Երևանին անմիջապես հարող Քանաքեռավան, Աշտարակի շրջանի Կարրի հնավայրերում: Այդ պեղումներով կուտակվել են նոր, գիտական կարևորություն ներկայացնող նյութեր, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն լրացնելու մեր իմացությունների թերին, պակասը, այլև նորովի դիտարկելու, քննության առնելու Հայաստանի վաղ միջնադարի, IV—VII դարերի նյութական մշակույթի հիմնահարցերը:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 1979 թվականին հետախուզական բնույթի պեղումներ է իրականացրել Էջմիածին քաղաքում, մշակույթի տան շրջակա տարածքում: Հուշարձանը մեզ է հասել ավերակ վիճակում, բացվել են գետներես շուրջ մեկ մետր միայն պահպանված երբեմնի շքեղ միանավ բազիլիկ եկեղեցու փլատակները: Վաղ քրիստոնեական պաշտամունքային այս կառույցը շարված է կարմիրեմպ աքաղաղ սուֆ քարով, կրաշաղախով: Եկեղեցին հաստատվել է եռաստիճան լայնանիստ հիմնաքառակնդանի, ստիլբատի վրա: Ներկայացնում է ուղղանկյուն ծավալի մեջ ներգծված խորանով սրահավոր եկեղեցու տիպը (չափերը՝ 8,5×5,5 մետր է): Ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից: Ավելի ուշ, ակներևաբար VII դարում, կառուցվել է արտաքին արքիո, որի աննշան մասն է պահպանվել: Երբեմնի մեծաշուք այս հուշարձանի ճարտարապետական հորինվածքը, գեղարվեստական հարդարանքը (եկեղեցու մույթերի, որմնասյան քիվերի, ավագ խորանի երկու կողմերի կամարը կրող քանդակազարդ մանրամասները և այլն) թելադրում են հանգելու այն հետևության, որ այս բազիլիկ եկեղեցին V—VI դարերի կառույց է (աղ. 1, նկ. 1): Հնավայրում պեղումների միջոցին հայտնաբերվել են կառույցի շինարարական խեցեղենի բազմաթիվ նմուշներ, որոնց մեջ աչքի են զարնում մասնավորապես կենաց ծառի ուլիեֆ և խորպոլի, ինչպես նաև հավասարաթև խաչի ուլիեֆ պատկերներով զարդարված ճակտոնները: Եկեղեցու հատակի տակ կատարված պեղումներով բացվել են փոքր չափի գլաբարներով շարված, կրաշաղախով երեսպատված վաղ միջնադարյան հնձանի մնացորդներ: Հնձանի հյուսիս-հարավ առանցքով պահպանված որմի երկարությունը 180 սմ. է: Եկեղեցու զբաղեցրած տարածքում հնձանի հայտնաբերումը հետաքրքիր է այն առումով, որ առարկայորեն ավելի քան հավաստի է դարձնում Ագաթանգեղոսի վկայությունը Տրդատ թագավորի հրամանով սպանված Հոփսիսիյան կույսերի սպանության վայրերում խաչեր կանգնեցնելու, ավելի ուշ եկեղեցիներ կառուցելու մասին: Պատմիչը նաև տեղեկացնում է, որ կույսերն ապաստան էին



գտել քաղաքի մերձակայքում, ուր կային խաղողի այգիներ և հնձաններ¹: Հոփսիմյան կույսերի նախատակության վայրում հետազոտում կառուցվում են վկայարան-եկեղեցիներ²: Նորաքաց հնձանի մի հատվածում, խնդրո առարկա եկեղեցու հյուսիսային պատի տակ, արտաքուստ հայտնաբերվել են ձևով, չափերով վաղ միջնադարյան, V—VI դարերի կավանոթները հիշեցնող ուռուցիկ իրանով, վերադիր ծալավեճով հարդարված վեց ամբողջական կարասներ, որոնք զետեղված են իրար շատ մոտ, երկու շարքով: Բոլոր կարասները ծածկված են սև տուֆե ողորկ կափարիչներով: Կարասների լայն շուրթերին թաց վիճակում բրուտը փորագրել է խԵ խՈ խՈԻ երկաթագիր գրեր, որոնք ոչ թե կավագործի անվան սկզբնատառերն են, այլ կարասի տարողությունն ազդարարող նշաններ: Տարողությունը կավանոթի վրա մատնանշելու ավանդույթը խոր արմտներ ունի: Այն հայտնի է տակավին մ. թ. ա. առաջին հազարամյակից, վանի թագավորության ժամանակներից, այն տարբերությամբ միայն, որ տարողության չափը ուրարտական կարասների վրա դրոշմված է ոչ թե կարասի շրթին, այլ ուռուցիկ մակերեսի վրա: Էջմիածնի այս հնավայրում բացված V դարի հնձանի մնացորդները հետաքրքիր նյութեր են բնձնողում ոչ միայն հնագույն արտադրական կառույցների, այլև Հին Հայաստանի չափերի ու կշիռների համակողմանի ուսումնասիրության համար: Պեղումներով բացահայտվեց ավելին: Եկեղեցու շուրջը բացվեցին միակտոր մեծ չափերի երկթեք սրբատաշ տուֆ քարից կերտված կափարիչով և ողորկ մեծ սալերով քարարկղային դամբարաններ, տուֆ քարից սարկոֆագներ, որպիսիք հայտնի են Հոփսիմե տաճարին մերձակա վաղ միջնադարյան դամբարանադաշտից, ինչպես նաև Աղց, Արուն, Գեղաշեն, Զովունի, Զովեծ և մի շարք այլ միջնադարյան հնա-

¹ Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 84:

² Նույն տեղում, էջ 885—886:

վայրերից: Սալարկղային այդ դամբարաններն ունեն 1,6—2 մետր երկարություն, շուրջ կես մետր լայնություն: Տարածքը հաճախակի ոռոգելու պատճառով վատ են պահպանվել կմախքները: Ուղեկցող նյութեր դամբարաններում գրեթե չկան. գտնվել են բրոնզե և երկաթե մատանիներ:


Ծառ ուշագրավ է բազիլիկ եկեղեցու շուրջը տարածվող դամբանադաշտում պեղված գույշ տուֆից միակտոր երկթեք մեծ չափերի կափարիչ ունեցող սալարկղային դամբարանը, որը պեղումների միջոցին բացվել է եկեղեցու հարավային պատից շուրջ երկու մետր հեռու: Այդ սալարկղային դամբարանի տուֆից միակտոր մեծ չափերի սրբատաշ երկթեք կափարիչը 184 սմ. երկարություն ունի, նիստերի լայնությունը՝ 96 սմ., բարձրությունը՝ 15 սմ.: Տապանաքարի կափարիչի երկու լանջերին, նիստերին մետրայան երկաթաբրով դրոշմված է հետևյալ տապանագիրը.

ԱՅՍ ՏԱՊԱՆ ԽԵՉԱՆԱ ԱՊՈՂԻՊՍՏ ՊԱՏՐԿԻ Է
... ԱՌՈՒԵ (Ղ)ԵՆԻՑ ՏՆ ՈՐԴԻՈՑ

Տապանագիրը փորագրելիս արձանագրող գրիչը պահպանել է հայ գրերի, երկաթե տառատեսակի պատկերային կատարելությունը (աղ. 2, նկ. 3): Արձանագրության մեջ հիշատակված է Առավելյան տոհմը: Հայ նախարարական տներից այս նշանավոր տոհմի ծագման մասին մեզ հասել են ավանդախառն տեղեկություններ: Մովսես Խորենացին, դատնալով այս նախարարության ծագումնաբանությանը, արձանագրում է, որ այն կյանքի է կոչել Արտաշես Առաջին թագավորը: Ըստ Խորենացու՝ Առավելյանները, որպես Սաթենիկ թագո հու մերձավորներ Հայաստան գալով, դասվում են հայ նախարարությունների շարքը³: Առավելյան տոհմը հիշատակված է «Գահնամանակի»⁴ 39-րդը, իսկ ըստ «Ջորանամակի»⁵ այդ նախարարական տոհմը հույց բանակը համարում էր 500 հեծյալներով: Հայոց սրբունիքում Առավելյան տոհմի շքադերձ զորքի, նրա գործունեության հետ կապված տեղեկությունները աղերսվում են V դարի հայ ազատագրական շարժումների հետ, որին իրենց ակտիվ մասնակցությունն են բերել տոհմի նշանավոր ներկայացուցիչները⁶: Հետաքրքրական է այն, որ այս նորահայտ տապանագրում հիշատակված ԽԵՉԱՆ ԱՌԱՎԵԼՅԱՆԻ մասին մեզ տեղեկություն է ավանդել Սեբեոս պատմիչը՝ արաբների Հայաստան նվաճումից երկու շաբաթի առնչությամբ: Ըստ այդ վկայության՝ Խեչան Առավելյանը (մատնագրի երկրորդ խԱՉԵԱՆ) մեկն էր այն իշխաններից, որոնք արաբական հրոսակների ներթափանցումից զուրկ լինելու գույժը հասցնում են Դվինը⁷. «Եւ ոչ ոք կարաց ի գաւրացն Հայոց արակնել գոյծ ի Դուին աւան բայց արք երեք յիշխանացն, որք երթային ժողովել զգաւրն նախադական՝ Թէոդորոս Վահնունի և Խաչեան Առաւելեան, և Ծապուն Ամատունի: Որք գնացեալ փախըստական ի Դուին և հասեալ ի կամուրջն Մեծամարտի ի բաց աւերելն և ինքեանք անցեալք գոյծ արկանել ի յաւանին»: Առավելյան Խեչան իշխանի արտիքու պատ պատրիկ կոչում—պատվանունը վաղ միջնադարում տարածում գտած իրողություն էր Հազարամյանում: Այն շնորհվում էր բյուզանդական կայսրության կողմից՝ հպատակ երկրների իշխանավորներին և նշանակում էր փոխիրուպատոս-իշխան⁸: Նորահայտ տապանագիրը կարևոր է ոչ միայն որպես Սեբեոսի տեղեկությունը առարկայորեն վավերացնող վկայակն, այլև որպես հնագույն գրի, երկաթագրի մուշ. որպես հնագրական հուշարձան: Հայաստանի է դարի այս նշանավոր գործչի դամբարանի, տապանաքարի հայտնաբերումը, հնագիտական գտածոները թելադրում են վաղ միջնադարյան այս հուշարձանի հնագիտական ուսումնասիրությունը, պեղումները շարունակելու կարևորությունը:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 1984 թվականին պեղումներ է կատարել նաև Քանաքեռավանում: Վաղ միջնադարյան այս հնավայրը գտնվում է Երևանի մոտ, Հրազդան գետի աջ ափին, Քանաքեռավան գյուղից 1,5 կմ. արևելք: Զբաղեցնում է շուրջ 250 մ² տարածություն: Քանաքեռի տարեցների շրջանում հնավայրը հայտնի է «Տիվ տիվ վանք» անունով⁹: Պեղումները կատարվել են բնակատեղիի հարավային հատվածում





³ Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1991, էջ 215, Մ. Կաղանկատուացու Պատմություն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 11:
⁴ Ն. Աղոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 289:
⁵ Նույն տեղում, էջ 289:
⁶ Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 198:
⁷ Պատմություն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 136:
⁸ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 226:
⁹ Կ. Ղաֆադարյան, Երևան. միջնադարյան հուշարձանները, Երևան, 1975, էջ 86, 92:
4. Ասատրյան, Պատմական Քանաքեռն ու քանաքեռցիները, Երևան, 1990, էջ 43, 48:



գտնվող սրբատաշ բարով կառուցված շինության տեղամասում: Այստեղ բացվել են սրբատաշ ճարտարապետական հուշարձանի՝ տուֆակերտ, 7,5×4,5 մետր չափեր ունեցող միանավ թաղակապ գողտրիկ կառույցի հիմնապատերը (աղ. 3, նկ. 2): Կահուկանված մասի բարձրությունը ավելի քան մեկ մետր է: Կառույցը դրվել է փոքր, ոչ լայն հիմնապատվանդանի վրա, որը հարավային կողմում տեղանքից ելնելով երկաստիճան է: Տիվ-տիվի վանքը ուղղանկյուն ծավալի մեջ ներգծված խորանով միանալ բազիլիկ կառույց է, ունի մեկ՝ հյուսիսային մուտք: Կառույցի արևմտյան որմի զգալի մասը չի պահպանվել: Եկեղեցու փլատակները մաքրելու աշխատանքների միջոցին հայտնաբերվել են խորանի բաղը կրող կամարի հիմքի քանդակազարդ խոյակներ, որոնք հարդարված են Դ—Ջ դարերին բնորոշ քանդակապատկերներով: Հայտնաբերվել են ատամնազարդ սլատոհանի պատկ, կառույցի ծածկը կրող ատամնազարդով քիվի բեկոր, ծածկասալեր, ալ մանրամասներ, որոնք հավաստում են այս շենքի Ե—Ջ դդ. կառուցված լինելու հանգամանքը: Պեղումներով հայտնաբերված գլանաձև հարդարանքով քիվի քարերը, ծածկասալերը ցույց են տալիս, որ պեղված կառույցը վերականգնվել է ԺԲ—ԺԳ դարերում: Վերակառուցելու միջոցին փոխվել է շինության ատամնաշարի հարդարանք ունեցող քիվը և ծածկը: Եկեղեցու հարավային կողմում տարածվում է գերեզմանատունը: Տարածքի այս հատվածը սղոսնքի պատճառով փլուզվում է, հոսում դեպի Հրազդան գետը: Սողանքի պատճառով վտանգված են նաև մեզ հասած եկեղեցու փլատակները: Եկեղեցու ավերակներից 300 մ. հարավ-արևմուտք, գետի աջ ափին պահպանվել է սև և գորշ երանգի սրբատաշ տուֆ բարով, կրա-

շաղախով կառուցված միաթոփչ կամրջի խելի մի հատվածը: Սակավաթիվ են հնագիտական նյութերը, գտնվել են շինարարական և առտնին կիրառության խեցեղենի բեկորներ: Նշանակալից թիվ են կազմում ատամնաշարի քանդակով, հավասարաթև խաչի, բուսական զարդապատկերներով ճարտարապետական մանրամասների բեկորները, որոնք իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի միջնադարյան ճարտարապետական հուշարձանների քանդակներում (Քասախ, Աշտարակի Ծիրանավոր, Ջրվեժ, Արամուս, Թալին և այլն): Ուշագրավ է Տիվ-տիվի արևելյան որմի արտաքուստ պատուհանի պսակի քարը, որը զարդարված է կրկնակի ատամնաշարով: Նման հորինվածքների ենք հանդիպում վաղ միջնադարի այլ հուշարձաններում՝ Արամուսի, Ջրվեժի, Թալինի, վաղ միջնադարյան հուշարձանների պատուհանների պսակներին ու քիվերին:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 1984 թվականից ձեռնամուխ է եղել Հայաստանի վաղ միջնադարյան հուշարձաններով հարուստ Կարբի հնավայրի ուսումնասիրությանը: Հնավայրը գտնվում է պատմական Արագածոտն գավառում՝ Աշտարակի շրջանի Կարբի գյուղից մեկ և կես կիլոմետր արևմուտք: Բնակավայրը զբաղեցնում է չորս հեկտար տարածություն: Պահպանվել են վաղ միջնադարյան կառույցների ավերակները. վերջիններս բարձրությունը գետներես մեկ մետր է: Բնակատեղիի տարբեր հատվածներում պահպանվել են միջնադարյան գերեզմանատներ, Գ—Է դարերի հայկական քանդակագործության դասական նմուշներ՝ պատկերաքանդակներով քառակող կոթողներ, եկեղեցիների ավերակներ, ծիսհան և այլ հուշարձաններ: 1985-ին պեղումները կենտրոնացվել են «Հին Կարբի» անունով հայտնի բնակավայրի հյուսիս-արևելյան եզրին, որտեղ բացվել են ավելի քան երկու մետր բարձրությամբ, բազմանկյուն մակերեսի մեջ ներգծված ավագ խորանով եռանավ բազիլիկ եկեղեցու պատերը (աղ. Ց, նկ. 1): Կառույցի շինաքարը բազմերանգ տուֆ է: Պահպանվել է հարավային մուտքի



մեծադիր քանդակազարդ բարավորը, որը հաստատված է կենտրոնում, շրջանի մեջ առնչված հավասարաթև խաչի, խաղողի և կենաց ծառի պատկերաքանդակներով: Գրեթե Քասաղի բազիլիկայի կերպն ունեցող այս եկեղեցու պեղումներով հայտնաբերվել են ճարտարապետական մանրամասներ՝ ատամնավոր քանդակազարդ քիվեր, որպիսիք հանդիպում են Դ—Ե դարերի բազիլիկ կառույցներում (Քասաղ, Ջովունի, Աշտարակ, Փարպի և այլն): «Հին Կարբի» 18,5×12,2 մետր չափեր ունեցող այս բազիլիկ եկեղեցու հարավային մասում պեղումներով բացվել են մեկ այլ սրբատաշ շինության որմերը: Գտնվել են Ե—Է դարերի քառակող կոթողներ, Զ—Է դդ. խաչքարեր, ԺԳ—ԺԸ դարերի տապանաքարեր: Եկեղեցու պատերին արտաքուստ փորագրված են եղել արձանագրություններ, ո-

րոնց եղծված, հողմնահարված հատվածները պահպանվել են եկեղեցու փլվածքի ճարտարապետական մանրամասների վրա: Կարքի գյուղի արևելյան եզրի ուշ միջնադարյան գերեզմանատանը հայտնաբերվել է Դ—Ե դդ. այսն բազալտե խարիսխ, որի միստերից մեկի վրա փորագրված է հետևյալ հետաքրքիր վավերագիրը.

Թ. 249 / (314) ՂԱ ՆՈՒԹ ԽԱՐՊԱՆՏԻՆ ԵՍ
ՔՈՒՐԴ ԱՆԲԵՐԴԵ ՑԻ ԻԾԽԱՆԱՑ ԻԾԽԱՆ
ԵՒ ԽՈՒՒՆԴ ԽԱԹՈՒՆՍ (ՆՈՐՈԳԵՑԱԿ Զ) ԲԵՐԴՍ
ԵՒ ԲՐՋՆԵՐՍ ԱՄ ՎԱԵԼԵԼ ՏԱ ԲԱԶՈՒՍ

Այս բացառիկ հետաքրքիր արձանագրությունը վկայում է 1314 թ. Անքերդի և Կարքիի գավառի տեր Քուրդ Վաչուտյանի և իր տիկնոջ Խուանդխաթունի կողմից Անքերդ ամրոցի և աշտարակների (քուրգերի) նորոգման մասին: Անքերդ ամրոցի նորոգմանը վերաբերող այս վկայագրի առկայությունը փաստում է Կարքի բնակավայրի կարևոր դերը Վաչուտյան տոհմի իշխանության տարիներին:

Բազիլիկ եկեղեցու պեղումներին զուգընթաց 1985 թ. Կարքիից 0,5 կմ. արևմուտք պեղվել է մեկ այլ հուշարձանախումբ: Բացվել են ԺԳ դ. եկեղեցու հիմնապատերը (չափերը՝ 7,5×20 մ.), որը շարված է սև և գորշ գույնի տուֆ քարով ու կրաշաղախով (աղ. 1, նկ. 2): Կառույցը վատ է պահպանվել: Անգամ հիմնապատերը ուրվազծվում են միայն որոշ հատվածներում: Եկեղեցու հարավային մասում 3×4 մետր չափերի մատուռի ավերակներն են, որի պատերը հարդարված են բազմաթիվ խաչաքանդակներով: Մատուռից արևելք բացվել է մեկ մետր լայնությամբ վաղ միջնադարյան կառույցի որմնացքի մի հատված, որի պեղումները դժվարանում են: Ավերվելուց հետո այս հատվածը վեր է ածվել գերեզմանոցի: Պեղվալարում հայտնաբերվել են վաղ միջնադարյան հուշակոթողներ, Ե—Է դարերի քառակող կոթողների պատվանդաններ: Մատուռի մաքրման աշխատանքների միջոցին գտնվել է մի արձանագիր շինաքար, որից կարելի է ենթադրել, որ այն վերաբերում է Վաչուտյան իշխանական տանը: Ներկայիս Կարքի գյուղի կենտրոնում, հրապարակի մոտ պեղումներով բացվել են Զ—Է դարերի հուշարձանախմբի մի մասը, քառախորան շինության հիմնապատերը: Հայտնաբերվել են ատամնաշար ունեցող քիվերի բեկորներ, խոյակներ, թևավոր խաչերի մասեր, քառակող կոթողի քանդակազարդ պատվանդան: Կարքի գյուղի տարածքում իրականացված պեղումները երևան են բերում միջնադարյան բնակատեղիների մոնումենտալ կառույցներ, գերեզմանոցներ, որոնց ժամանակագրական սահմանները ընդգրկում են Դ—ԺԷ դարերը, վկայելով այս հնավայրում պեղումները շարունակելու կարևորությունը:

Г. О. КАРАХАНЯН, Г. Г. САРКИСЯН, У. А. МЕЛКОНИН, И. П. АРУТЮНЯН — Новые памятники архитектуры Армении раннего средневековья. — Анализируются результаты археологических раскопок экспедиции Института археологии и этнографии АН АР в Эчмиадзинском и Аштаракском районах. Обнаружены новые церкви, давилыи, другого рода сооружения, вазисы, относящиеся к малозаученному на территории Армении периоду раннего средневековья. Исключительный интерес вызывают факты, связанные с родом Агавелянов. Обобщение и характеристика всех материалов позволяет включить их в систему исследований армянской культуры IV—V вв.